Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-028[1]-06.08.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում՝

1) առաջին և 1.1 մասերում «աշխատակազմի քարտուղարը՝» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն հոդվածի 1.3 մասով նախատեսված դեպքերի)» բառերով.

2) 1.2 մասում «շրջանի ղեկավարը՝» բառերից հետո լրացնել «, (բացառությամբ սույն հոդվածի 1.3 մասով նախատեսված դեպքերի)» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.3-րդ մասով.

«1.3. Աշխատակազմում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աուդիտորներին պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓՈԹԵՐԹ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առարկության, առաջարկության հեղինակը (ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	1. Օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: 2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: 3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: 4. Իրավական ակտում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է: 5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: 6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:	1. Ընդունվել է 2. Ընդունվել է 3.Ընդունվել է 4.Ընդունվել է 5.Ընդունվել է 6.Ընդունվել է

	7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: 8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:	7.1 Ընդունվել է և նախագծի 1-ին հոդվածում «151» թիվը փոխարինվել «15.1.» թվով, իսկ 4-րդ հոդվածի 4-րդ կետում «122» թիվը՝ «12^2» թվով: 7.2 Չի ընդունվել, քանի որ Նախագծի 4-րդ հոդվածի մասերի համարակալումը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: